

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԿԱՐՏՈՒՍԵԱՆ ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՈՐ Ի ՊԱԻՒԱ

(Տես յ'էջ 282)



Միայն նմանութիւն Միլանու մայր եկեղեցւոյ ներքնոյն հետ, ըսաւ զարմացմամբ տիկինն՝ հազիւ յեկեղեցին մտած, կրնամք ըսել թէ միեւնոյն միտքն զաղափարած ու ճարտարապետած է այս երկու հրաշակերտըս այլ։ Ասոր արտաքին շինուածոց ձեւերէն, ըստ որում զրեթէ ամէնքն այլ բոլորադեղն յօրինուածք են, զարդարուած կրկնաձեւ խուրանօջ (abside), Լուբարդեան ոճով և կատարելապէս ուղղաձիգ որմնացիւնք, կարող չէի երեսակայել գտնել ի ներքս այսպիսի գեղեցիկ գոթական եկեղեցի։

— Ստուգիւ, պատասխանեց ճարտարապետն, առաջին տեսոյն այսպիսի ազդուութիւն կ'ունենայ. և ոչ միայն կ'իմացուի թէ սա ժամանակակից է Միլանու մայր եկեղեցւոյն, այլ նաեւ նկատելով աւագ սիւները (pilon) և կամարաց բաշխումը, կ'ըսես՝ թէ մին միւսոյն օրինակութիւն է. եւ իբրեք իսկ սա յետոյ է քան զայն, զի մինչ ի 1393 տարւոյն Միլանու մայր եկեղեցւոյ աւագ սեանց ամբօթեան մասին տարակոյսք յուզուէին, սա՝ ինչպէս արդէն ըսած եմք՝ երեք տարի յետոյ, 1396ին հիմնարկեցաւ. և ամենն աւելի իրարու նմանող՝ աւագ սիւներն են, մանաւանդ եթէ աւագ խորանին ձախակողմեան սեան հետ համեմատուին, զոր կոգած է Հարլէր կանուխ ի 1392 ամին։

Դարձեալ գիտեցէք, տիկին, որ փոքր կամ երկրորդական խմբարաններ բացող կամարքն կիսաբոլոր են և ոչ սուր, իսկ զխաւորն սուր. և որովհետեւ այս վերջինքն են որ խկոյն այցեւուին տեսութիւնը կը գրաւեն, անոր համար շէնքն այլ գոթական տարազ մի կ'առ-

նու և աւելի ընդարձակութիւն՝ քան ինչ որ իրականն է։ Ստուգիւ, նման արդիւնքը կը տեսնեմք նաեւ Միլան քաղաքին մայր եկեղեցւոյ, և այլ ամենայն եկեղեցեաց մէջ՝ որ գոթական ոճոյն կը վերարբերին. սրպիսի է նաեւ Հռովմայ Ս. Պետրոսի եկեղեցւոյ մէջ այցելուաց ունեցած ներհակ պատրանքն, յորում ի սկզբան շէն զգար այն բնդարձակութիւնը, զոր յետ մի քանի շրջանաց լիովին կ'ըմբռնեն։

— Եւ կը խոստովանիմ, պարոն, որ միշտ գոթական եկեղեցին նախադաս կը համարիմ քան զասորնտիր ոճով յօրինուածքը. և զուցէ այս զգացմանս պատճառն այլ ոճոյ՝ մեր հիւսիսականաց (Ռուսաց) ճաշակի և կլիմայի, ըսեմ, աւելի յարմար լինելն է, բայց ինձ կը թուի աւելի լաւ ամփոփել այցելու աղօթաւորին միտքն ու հոգին, և թէ շատ աւելի կը տարբերի միւս դասական մեծամեծ սրահից հասարակ ոճէն, որ շատ քաղաքական կամ աշխարհային է և անպատեհ կրօնական շէնքին։

— Լիովին համոզուած եմ՝ ձեր ըսածին, տիկին. գոթական ճարտարապետութիւնն զրեթէ քրիստոնէական արուեստ է, պտուղ այն թուականերու՝ երբ մեր հաւատքն անկեղծ կը ծաղկէր. մինչդեռ դասական ոճն հեթանոսականին ազդեցութիւն և նմանութիւն է, զեկեղեցի, նաեւ ամենագեղեցիկ, բայց մեր եկեղեցեաց համար խիստ ցուրտ, և զուրկ կարեւոր ազդուութենէ, այլ և բանաստեղծութենէ։ Այսու ըսել չեմ ուզեր թէ չկան եկեղեցիք՝ որ այս ոճով կառուցուած լինելով հանդերձ՝ կրօնական ամփոփումն ազդեն. այլ ստոյգ է՝ որ գոթականք յաղթական և ընտ-

բելի են։ Սակայն սոցանէ կը զարտուղին կաթողիկէք (basilique), որք քրիստոնէութեան հետ ծագած, գուցէ իրեանց պատմական յիշատակօք՝ չգիտեմ, բայց իմ վրաս մեծ ազդեցութիւն ունին։ զորս ըստ ամենայնի քրիստոնէական կը համարիմ։ Դարձեալ, ներեցէք ինձ որ՝ իբր միլանեցի՝ արտիս մէջ փոքրիկ տեղ մ'այլ ունենամ յարգանաց նկատմամբ լուրարդական ոճով եկեղեցեաց։ որ գուցէ տկարութիւն մի համարուի իմ կողմանէս՝ կամ շատ սէր առ հայրենականն, բայց միանգամայն ինձ կը թուի թէ իրենց կրօնական զգացմամբ կարող են մրցիլ կաթողիկէից և նոյն իսկ գոթական եկեղեցեաց հետ։

— Համաժամ եմ, պարոն, և ոչ առ քաղաքաւարութեան։ զի Գերմանացիք՝ լոմբարդականը՝ նախկին գոթական կ'անուանեն, որով յայտ է՝ թէ ընդ մէջ լոմբարդականին և գոթականի մեծ նմանութիւն կը գտնեն։ ձեր ասածն իրաւացի է։

— Կամարաց զարդարանքն, ինչպէս արդէն կը տեսնէք, տիկին, վերածնութեան ուճով է, որոյ զանազանութիւնն ի միոյ ի միան՝ ընդհանուր տեսարանը լաւացընէ։ զի թէ ամէնքն կապտադոյն լինէին և ի վրայն ոսկի աստղեր սփռած, ինչպէս ոմանք են, պիտի ամէնքն միասին մի ծանր ու ձանձրալի տեսարան և ազդու յառաջ բերէին։

— Ո՛հ, դուք յատակը կը զիտէք, տիկին։ Ի՞նչ կ'ուզէք որ լինի, այնպիսի ժամանակ մի նորոգուեցա՞ւ երբ արուեստի ճաշակն ամենացած էր, և եղած հնոյն ոչ որ հաւան էր։

— Բայց չէի՞ն տեսներ որ այս իրենց յորինած յատակն՝ նորաձեւութեանց վաճառատան մի յատակ կ'երեւի, չէի՞ն զգար որ խիստ արդի է։ հարցադր տիկինն։

— Ա՛հ երեւի թէ ոչ։ և վառն այն է, որ սակաւ տարի յառաջ ստիպուեցան կրկին նորոգել ասոր զիմացի խմբարանի յատակը, յաճախ լսուած ձախող քննադատութեանցմէ ամաչելով շինութեանս յանձնառքը։ որ եղաւ յամի 1840, երբ յետ անցեալ դարու հալածանաց կարտուսեանք վերբուտին ի մենաստան վերադարձան։ Նորոգու-

թիւնը կատարել տուաւ իւր ծախքով կոմսն Ամբրոսիոս Նաւա, ճարտարապետ, որում երախտաւոր են միլանեցիք իրենց մայր եկեղեցւոյ մեծ կամ զլխաւոր բուրգ (aiguille) ցարդ՝ ամուր մնալուն համար։ նորոգութիւն մի՝ որ անհրաժեշտ դարձած էր, զի յատակը կազմող դռնաւոր աղիւսք զրեթէ բոլորովին եղծուած էին։ Այժմ այդ ութանկիւնին երու մէջ ամփոփուած աստղերու պատկերազիծն՝ զրեթէ հնոյն նման է, և հանդերձ ցաւելով՝ թէ ինչու հինը չի կարկատուեցաւ, հարկ է գոհ լինիմք՝ որ զոնեայ հին պատկերազիծն պահուեցաւ։

Աւագ խմբարանի կողմէն մեծ սեանց վրայ յեցած կային ճարտարապետական կայլակք (gouttes), որք իրենց վրայ արձան կը կրէին։ Այդ կոճք (console, corbeau) կամ թէ ըսել՝ կայլակք, Նաւայի հրամանաւ ի սպառ վերցուեցան, իսկ անոնց վրայ եղած անդրեաց մի մասն՝ ճակատի զարդուն յաւելան։

Չեր զիտողութեան արժանի կը համարիմ, ազնիւ այցելուք, այն երկաշք պատուհանաց վտնութիւնը, որ փոքր կամ երկրորդական խմբարանաց արտաքին որմերը կը զարդարեն։ կ'ըսեմ զարդարեն, զի ամէնքն այլ կեղծ են։

— Ի՞նչ նորոքինակ գաղափար է, նկարել այն պատուհանէն զուրս կարկառուած տրեղայն, ըսաւ զարմանալով ոռս պարոնն։ Թշուառականն այնպէս լաւ նկարուած է՝ որ կարծես կենդանի լինի։

Աւագ խորանն փակող վառակաձեւ դուռն լի մշտապղնձոյ (bronze) զարդուք, ինչպէս և բոլոր միւս նման դռներն որ մատուռները կը փակեն, Պետրոս Պաւլոս Հոփպայի աշխատութիւնք են՝ Փրանկիսկոս Վիլլայի գծած արուճառակի վրայէն յորինուած, ամէնքն այլ գործ վերշատաներորդ գարու։

Փոքր խմբարանաց որմերու երկայնութեամբ կարգաւ զետեղուած մեծամեծ անդրիք՝ ԺՊՊՊ զարուն բնարեւազոյն ճարտարաց գործեր են, թէ եւ չափաւոր յարգ մ'ունին։ Ընդ հակառակն այցելուաց մտապրութեան արժանի են օրհնեալ ջրայ այդ կրկին ամաններն, իրենց՝ գունապայն կնդ շերտերով յորինուած՝ գեղեցիկ երփնադրուազ գործուածովն (marquetterie) և ամենալաւ ձուլուած և քանդակա-

գործով ընտրողապէս աշխատուած ու պատկերազրուած (ciselure) մղտապղընծոյ զարդերով ։

Եթէ հաճութիւն ունիք, ազնիւ այցելուք կրնամք ամենայն մատուռնս մի առ մի այցելել ։

Այս մատարանց խորանք, ամէնքն այլ մի և նոյն ծրագրով յորինուած են, յՊՁԻ՞ դարուն ի վերջ և ի սկիզբն եօթնետասաներ, բորդին, և անուանի են իրենց սեանց բնոյն վրայի (fût) զարդարանաց մէջ ի գործ ածուած մարմարաց զանազանութեան և աշխուղեան համար ։ Սոցա մէջ գլխաւորապէս տեսութեան արժանի են ի ճակատ խորանաց դրուած նըկարք (խո. ancona), մի քանի սեղանոյ գոգնոցք, ինչ ինչ նկարք կամարաց կամ պատահաներու ապակեաց վրայ, և աւազանքէն ոմանք. զորս ինքնին ձեզ ցոյց կու տամ, որպէս զի սակաւ կամ ոչինչ կարեւորութիւն ունող իրեր գննելով ժամանակ չկորուսանմք ։

Սոյն առաջին մատարանս մէջ, որ Ս. Մագդաղինէի նուիրուած է, գիտելի են Յակոբոս Դիմոսիոսի յորինած Կարտուսեան Սրբուհեաց որմանկարքը, յամի 1478 ։

— Ինչ, Կարտուսեանք միանձնուհիք ալ ունէին ։

— Այո, բայց զատ վանքի մէջ, կ'իմացուի, որք չեմ գիտեր թէ ասոնց պէս լուակացութեան պարտաւորութիւնը ունի'ն՝ թէ ոչ, բայց իրենք այլ Ս. Բրունոյի կանոնաց կը հետեւին ։

Նոյնպէս գիտողութեան արժանի է խորանիս մի կողմն գտուած աւազանն, շատ հաւանօրէն գործ նախայիշեալ Անտոն Ոմողէոյի, որ եկեղեցւոյս ճակատին հիմնական կամ պատուճազարդ գտաւոյն մեծ մասը յորինեց. վասն զի յամի 1478, առ Կարտուսեանս յանձնած աշխատութեաց ծանուցագրի մի մէջ՝ աւազան մ'ալ յիշուած է, և արդէն ասուր յորինուածն Ոմողէոյի աշխատութեանն ոմոյն շատ կը նմանի. բայց կան նաեւ ոմանք որ զայս Մանուկազգա եղբարն կ'ըմայեն ։

Այս երկրորդ մատարանս մէջ, Ս. Միքայելի նուիրուած, ժամանակաւ վեց մասէ բաղկացած խորանի պատկեր մի կայր, Պետրոզինոյի նկարած՝ որ Հռափայելի վարժա-

պետն էր. սորա հինգ մասերն փրանկաց արշաւանքի ժամանակ աներեւութացան, յետոյ միլանցի պարոն մի վերստին ձեռք բերաւ, որ ամուր չկենալով զայնս պահելու՝ դարձեալ ի ձեռաց հանեց և այժմ ի Լոնդոն գտուին ։ Հօս այժմ Պետրոզինոյին միայն Հայրն յաշխնեակաւ մնացած է. իսկ այն չորս վարդապետք որ անոր կողմերն կենան՝ Բորգոնիոնեայ են, իսկ ստորին մասերուն մէջ, յետոյ, Պետրոզինոյեայ կորուսուած նկարուց օրինակերը դրուած են ։

— Ինչ կենդանի ու պայծառ է Հօր Աստուծոյ դէմքն. նոյն իսկ արուեստին անտեղեակ անձինք յայտնապէս կը զգան թէ մեծ ճարտարի գործ է. նմանապէս եկեղեցւոյ չորս վարդապետք այլ գեղեցիկ են, որչափ գիտուն՝ այնչափ աւելի կը կենդանանան ։ Զարմանալի՜ բան. բաւական նկարասրահ (galerie) այցելած իմ, և եթէ յիշողութիւնս զիս չի խարէր՝ ամենեւին այդ Բորգոնիոնէի անուան չեմ հանդիպեր ։

— Չէ՞ս յիշեր, բաւ պարոնն իւր տիկնոջ, այն պատերազմական գեղեցիկ նկարքը, Բորգոնիոնէի նկարած ։

— Յիշաի Բորգոնիոնէ անուամբ նկարիչ մ'այլ կայ, ըստ ճարտարապետն, հռչակուած իւր ռազմացոյց նկարուք, սակայն ասոր հետ պէտք չէ շփոթել, որ բոլորովին սրբազան նկարիչ մ'է ։ Չեք ըսած Բորգոնիոնէն, պարոն, յիշե՛ր դարու մարդ է, մինչդեռ սա հնգետասաներորդին վերջեր ապրած է, զինքը զրեթէ առանձնակի սրբազան նկարչութեան նուիրելով. որոյ աշխատութեանց մին պահուի Բեռլինի նկարասրահին մէջ ։

Ասոնք այլ յարգելի որմանկարք են, գործ Պամփիլոս Նուալոնէի, եօթնետասաներորդ դարու նկարչի. ինչպէս նաեւ արժէք մի ցոյց կու տայ այդ Թովմաս Ուրտլինոյի քանդակած սեղանի գոգնոցն, սակայն այսչափ գլուխ գործոց մէջ աչքէ կը լրիպին ։

Երրորդ մատարան մէջ դիտելի են կամարին վրայ Դիմոսիոսի յորինած Կարտուսեան սրբոց որմանկարքն, յամի 1478 ։

Չորրորդ մատուռն ունի Պրոկակինեայ նըկարք և Բուստոլայի քանդակք, բայց կրնամք զանց ընել ։

Հինգերորդին խորանի պատկերն՝ ասպետ Գէլկայիրոյի նկարն է . իսկ սեղանի զուգնոցն, պինդ քարի շերտերով կարկատուն կամ արուցիկի աշխատուած ի Սակքեանց, թէեւ արուեստական մեծ արժէք չունի, բայց արդիւնք է ամենամեծ համբերութեան: Սակքեանց այս պինդ քարի աշխատութիւնք խիստ շատ են, յորոց ոմանք ամբողջ քսան եւ հինգ ամաց յարատեւ աշխատութեամբ գործուած են, բայց անօգուտ կը կարծեմ զայնս զընտելու համար ժամանակ կորուսանել: Գիտե՛լու աւելի արժանին է այս ապակոյ վրայի հին նկարս, անձանօթ ճարտարի գործ:

Անցնիմք ի վեցերորդ մասնուն, որ է Ս. Ամբրոսիոսի նուիրեալ: Հօս կրնամք գննել խորանի պատկերը, յորում նկարուած է Ս. Ամբրոսիոս՝ հայրապետական զգեստուք, իւր յաշ կողմն Ս. Սատիրոս իւր եղբայրն և Ս. Գերասիմոս, իսկ ի ձախ Ս. Մարկելլինա իւր քոյրն և Ս. Պրոտասիոս:

Հօս հայրապետին վեմանութիւնն և սրբոց վայելչութիւնն անհամեմատելի է, և գունոց պատշաճութիւնն՝ ամենանշիւտ և ընտիր:

Ձեզ ըսած էի, տիկին, թէ յանձն Բորգոնիոնէի առաջնակարգ նկարիչ մի պիտի տեսնէք, և սակայն դեռ հօս սրբազան ճարտարն զինքը բոլորովին չի յայտնեց, բայց պիտի տեսնէք զայդ յայտնապէս ուրիշ տառապի մի վրայ:

— Բայց ի՞նչպէս կարելի է, որ Նապոլէոն Ա, մինչդեռ իտալիոյ այնքան արուեստի հրաշակերտս կողոպտեց տարաւ, այս տառապին այլ միասին չէ տարած. հարցուց տիկինն:

— Գիտնոց և հմտից՝ կամ գոնեայ այնպիսի համարուածերու մեծագոյն մասն, այն ժամանակ և զուցէ արդ իսկ, իրենց բովանդակ զիտութեան աղբիւր զվաստարին ունին. ինչ որ նա գրած է՝ աւետարանն, և ինչ որ մոռցած կամ տեսած չէ՝ մոռագրութեան իսկ անարժան: Մեծն Նապոլէոն ընտրեց մի քանի հմուտք և յանձնեց անոնց կարտուսեան տաճարէս երկոտասան նկար վերցընել, բնականապէս լաւագոնաց միջէն զայնս ընտրելով. բայց բուն լաւագոյնք Վասարեայ թուած ճարտարաց գործեր չէին, որով և ա.


զատեցան: Գործակատար հմուտքն շատացան կողոպտել միայն երկոտասան երկրորդական նկարք, ըստ որում գործ՝ այն հռչակաւոր մասնակարգին զոված արուեստագիտաց:

— Բայց, կարծեմ, ինչ ուր գեղեցիկ է՝ գեղեցիկ է, և ակնարկ մի բաւական է տեսնելու: Եթէ խնդիրն հնագիտական իրաց վրայ լինէր, այն ժամանակ կ'ընդունիմ՝ որ շատք իրենց հնութեան կամ հազուագիւտ լինելուն համար յարգուին. բայց նկար մի ի՞նչ որ է՝ այն է. և քանի լաւ գծագրուած և նկարուած է, գոյներն ընտիր պատշաճուած, ընծայելով գեղեցիկ բազադրուած, ճմարիտ ու խօսուն տեսարան, ի՞նչ հարկ կայ որ մատենագիր մի, թէ եւ մեծանուն, զայն գեղեցիկ կոչէ՝ որ գեղեցիկ լինի:

— Բայց ի՞նչ, սա միակ կամ առաջին դէպքն չէ, միանգամայն ալ զօրուարին ըմբռնել թէ ինչո՞ւ հանդիպուին: Գուցէ գիտութիւնն բաւական չի լինիր աչքը կրթելու, կամ գուցէ նոյն իսկ ճշմարտութենէն կը հեռացընէ, մանաւանդ եթէ ոք փոխանակ իւր աչքերով, իւր ներքին տեսութեամբ և անկախութեամբ զատաստան ընելու, կ'երթայ մեծամեծերու կը յարի, անոնց սկզբունքը կը ծծէ. և վերջապէս երբ օր մի՝ արուեստի գլուխ տարած առարկայ մի իւր առաջ կ'ենէն, — մինչդեռ տարակուսեալ իւր յատուկ և մի այլ անուանի գրողի ներհակ կարծեաց ընդ մէջ կը տարուբերի. — վարանեալ անհաստատութեան մէջ յանկարծ միառոյն կը հետեւի: Վասարին չէ յիշած կամ տեսած շատ լոմբարդացի ճարտարաց գործեր, որք կրնան միւս գաւառաց առաջնակարգիներու ձեռակերտաց հետ համադասիլ. իսկ այժմ եղածին վրէժն առնելու համար՝ ժամանակ պէտք պիտի լինի:

Առաջիկայ մասնունն կրնամք զանց ընել, ուր սակաւայարգ կան. գործեր որք յետ Բորգոնիոնէի նկարս անտեսելու՝ այլ եւս մեր ուշքը չեն գրաւեր: Անցնիմք գիմնոցի կողման խըմբարանն:

Մեր ի ձախ կողմն ունիմք Սրբոց Նշխարաց խորանն: Սորա ճակատի նկարն, յորում անտեսուի Գրիստոս ի մէջ Սրբոց, գործ է Դանիելի Կրէսպեայ, մի ի լաւագոյն ճարտարաց



Կարտուսեանց եկեղեցոյն առաջ խմբարան և խորան.

միլանեան դպրոցին, որ զայս գլխավորեց յամի 1625: Այս արուեստագիտի գործոց զլուսը՝ գտուին միւս այլ կարտուսեանց եկեղեցւոյ մէջ ի Գարէնեանոյ, սակաւ հազարամետր հեռի Միլանէն. Կրէսպին իւր այս և այլ նկարոց մէջ՝ զլխավորապէս որմանկարոց՝ զինքը ստացած մեծ համբաւոյն արժանի ցուցուց:

Այս նկարս շարժուն է, զի այնոր յետակողմն Սրբոց նշխարք են ամփոփուած, որպէս և խորանս կոչուի. պատսպարուած յառաջոյ երկաթի և մշտապղծնեայ վանքակազարդով: Խորանին զոգնոցն՝ պինդ և ազնիւ քարից շերտովք հիսուածոյ: ամենանուրբ աշխատութիւն մ'է վաղերիոս և կարողոս Սակքեանց, զարմանաց առարկայ դարձած այցելուաց մեծամասնութեան. բայց ես՝ յարգելով բոտ ամենայնի այլոց կարծիքն, յայսմ ուրիշ արժանիք չեմ տեսներ, բայց եթէ համբերութիւն, որ ճարտարի հանճարոյն ամենայն ընձիւղ կամ զիւտ կը ցամքեցընէ, և արգարեւ, ինչպէս կը տեսնէք, ի վրայն ամենեւին արուեստական հանճար չփայլի:

Խորանի (abside) նկարքն Բորգոնիոնէի են, բայց ափսոս, շատ մնաստուած: Նոյն անձին են նաեւ խմբարանին վերեւն այն բոլորածեւոց մէջ նկարածոս պատկերք. իսկ զայնս շրջապատող զարդարանքն, ձեւացած՝ պէսպէս նարօտից գեղեցիկ արուեստով իրար հանդիպելով ու զիրար կտրելով, և այսպէս կարծես անկուած մի ձեւացընելով, եթէ ոչ Լէոնարդոյ Գալինիեայ գծազրութեանցմէ առնուած է, անշուշտ անոնց հետեւողութեամբ յորինուած է. զի արդէն իսկ համբաւուած է Լէոնարդոյն այս ինքնագիւտ զարդարանաց հնարիչ լինելն:

— Փառաւոր զարդարանք, և ինձ համար բոլորովին նոր, ըստ տիկինն:

— Ստոյգ է, ըստ ճարտարապետն, և կարծեմ որ բաց ի ասոնց և անոնց որ ի Միլան գտուին, նման բան այլ ոչ մի տեղ չի հանդիպիր: Չեմ հասկանար թէ ի՞նչպէս արդի զարդարութիւն, որ յաճախ իրենց ուղեղը կը մաշեցընեն նոր ձեւ մի հնարելու համար, և վերջ ի վերջոյ կամ խառնածին կամ անճաշակ էակ մի յառաջ կը բերեն, ի՞նչպէս զայս չեն օրինակեր, զոր կարող են նոյն իսկ

իրենց սեպհականել և իրրու նորութիւն ի զործ ածել, ապահով լինելով որ շատեր չեն գիտեր թէ չորս դարէ ի վեր մեծն Լէոնարդոյ զայն հնարած է:

Սա գեղեցիկ աշտանակք մղտապղծնէ, որ խորանին առջեւ շարուած են, մեր բնութեազոյն արուեստագիտաց միոյն՝ Մինիբադ փոխտանայի զործ են, որոյ զեւ այլ շատ և խիստ զովելի աշխատութիւններ պիտի տեսնեմք:

Կողմնակի խորանաց երկու պատահանաց վրայ մտադրութեան արժանի են՝ ապակոյ վրայ գործուած կրկին նկարք, Ս. Հերոնիմոս՝ ծիրանաւորի հանդերձիւք և Քրիստոսի ծնունդն, անծանօթ արուեստաւորի զործեր:

Նոյն այս խորանաց մէջ դրուած էին՝ մինչեւ երկու տարի յառաջ՝ երկու ընկողմանեայ անդրիք, որ կը ներկայացընէին զԼուդովիկոս Մորոյ և անոր ամուսինը Երանուհի Դ'Եսսէ, մին արեւելեանին և միւսն արեւմտեանին մէջ. դըսուհին՝ վախճանած է Միլան յամի 1493, իսկ զուսն մեռած կալանաւոր փրանկիոյ Լոգէս զգեկին մէջ, ի 1508 տարւոյն: Այսմ այս անդրիք խմբարանի միջավայրն զետեղուած են. թէեւ նախկին զրից մէջ աւելի լաւ լուսաւորուած էին, և յիրեւոց անկատ լինելով՝ կարելի էր զայնս զիւրաւ ամէն կողմէ դիտել:

— Ուրեմն ի՞նչ պատճառաւ իրենց տեղէն շարժեցին, եթէ ուր որ էին լաւ կը տեսնուէին. հարցուց տիկինն:

— Երկու պատճառաւ, տիկին. նախ զործելու և փոփոխելու մտլութեան համար, որ մեր օրերուս թերութիւնն է, և երկրորդ՝ զի ի սկզբան այս երկու անդրիք իրար հետ միասնայն և միակ մասարձան մի ձեւացընելու սահմանուած էին՝ Միլանու Սուրբն Մարիամ Ծնորհաց կոչուած եկեղեցւոյ մէջ, զոր Լուդովիկոս Մորոյ Սփորզա իւր ընտանեաց դամբանաց համար սահմանած է, ինչպէս որ Յովհան Գալլէազզոյ Վիսկոնտին այլ այս նարատուեսանց տաճարը բնարած էր: Այդ Սփորզա ընտանեաց մահարձանը յաճանուած էր քանակակազոր Քրիստոսափոր Սյարբեայ՝ հաւանօրէն ի 1493 տարւոյն՝ երբ մեռաւ դըսուհին Երանուհի Դ'Եսսէ. բայց յամի 1493 զըր-

մին փախուստն և բանտարկութիւնն՝ աշխատութիւնը առկախ ձգեցին. որոյ համար Սուլարին միայն այս երկու արձանները կոփեց, յորոց տակաւին մին բոլորովին լրացած չէ, պակասելով առանձին մասանց մանր զարդարանքն, և մի այլ Բարեպաշտադրի անուամբ անդրի, որը ապա տապանաբարով հանդերձ ըստ կարելւայն լաւ կերպով զետեղուեցան միասին՝ յիշեալ Շնորհաց եկեղեցւոյ մէջ, ուր և մնացին մինչեւ ի 1564 ամ, և ապա հօս փոխադրուեցան և յիշեալ խորանաց մէջ հաստատուեցան: (Յետոյ սկսեց զէպ ի հին աւանդատնս ցուռն քայլել, և մօտ հասնելով Քրիստոս սեան կապուած արձանին, տիկինն յանկարծակի զալու պէս զարմացաւ կեցաւ):

— Այս արձանս, ըսաւ, ճարտարապետն, ամենալաւ ընդօրինակութիւն է Միքէլանջելոյի կոփած արձանին, պահուած ի Հուլիմ Սուրբ Մարիամ Միներլա եկեղեցւոյ մէջ:

— Կը տեսնէք, պարոն, ես որ ամենեւին արձանագործութիւնէ չեմ հասկանար, սակայն իսկոյն զգացի՝ որ այս արձանն, թէ եւ ընդօրինակութիւն, ամենագեղեցիկ է:

— Խնդիրն, տիկին, միշտ բարոնտն ըմբռնելու վրայ է, ոչ թէ ուսանելու. դուք արդէն արուեստագէտ ծնած էք, որով և կ'ըմբռնէք գեղեցկութիւնն՝ ուր որ է:

Այս փառաւոր դուստն որ ի հին աւանդատունն մտցընէ, գործ է Յովհաննէս Աւետոն Ոմոգէլոյի, զլիաւարած իբր ի 1480 ամին: Դրանս ի վեր գետեղուած կոփածոյ ըսլորակ կենդանագիրք, Վիսկոնտի և Սփորզա ազգատոհմէ՝ Միլանու զքսից զէմբեր են: Գուցէ թմրիկ (tympan) վրայ զարդարանքն շատ ձոխ է, որով կարծես սակաւ մի գլխան կատարին ծանրաբեռնած. սակայն դրանս ամբողջ ճարտարապետական համադրութիւնն՝ սքանչելապէս նուրբ ճաշակի մ'արդիւնք է:


Դեռ քանի յատակս նորոգուած չէր, աւանդատնս մէջ թեթեւ առ ի շեղով մի մշտցուէր, յորինուած թրծուն աղիւսերով՝ որք պէսպէս գունտովք պատշաճութիւն նախկին յատակի հետ. ապա այդ հարթ առ ի շեղն փոխանակուեցաւ այս կենցալ աստիճանով՝ ի վրնաս վայելուչ տեսարանին: Գործողն միշտ նայն է, նոյն աւաղելի մոլոթիւնն փոխելու

և ուղղելու ամէն ինչ որ մեր ծերունիք ըրած են, որպէս թէ սերկեան օրս աւելի բան մի գիտնային ընել. որպիսի՝ ցնորք:

Մտնեմք ուրեմն, այս հին աւանդատնս մէջ, ուր մեր արուեստական ճաշակն զոհացընելու նիւթեր՝ պիտի գտնեմք:

— Ներեցէք, պարոն, հին աւանդատուն ըսիք, այլ հօս ամենայն ինչ նոր կ'երեւի. ըսաւ տիկինն հազիւ ներս մտած:

— Չորս կողմն պատող զարակը (rayon) հին են և չափով ինչ յարկելի, միայն թէ սակաւ դուռտեղի զապփարով մի անոնց վըրայէն հին ներկը զերծուցին և ուղղապէս պայծառացուցին. որով անտարակոյս կիսով չափ իրենց յարգը կարուսին, բայց յուսամք որ մեր յաջորդք այսպիսի իրաց աւելի պատկառ կը կենան: Այդ սրմբն որ այժմ սպիտակացած կը տեսնէք, ամբողջապէս նկարուք ծածկուած էին, ոմանք խիտ յարգոյ, յորս կային հինգ տաստակը (toile, tableau) վերմիլիոս ասպետի, այսինքն, Ս. Յովհան. Մկրտիչ, Ս. Ստեփ. նախավկայ, Ս. Բրուռնոնի երկու պատկեր և Ս. Անշէմուս. դարձեալ կային Հայր-Աստուած՝ Բեռնարդոս կամպեայ, Յիսուս փրկիչ՝ Վինկենտ Կամպեայ, ծիրանաւոր Կոլոննայի կենդանագիրն՝ Գուիգոյ Ռեւնեայ գործ համարուած, և Ս. Ազոստինոս՝ Բորգոնիոնէի նկարած, որք յուսամ՝ հազիւ թէ որմոց սպիտակաւորումն աւարտի՝ պահ մ'առաջ իրենց տեղերն կը դրուին: Այս հին աւանդատնս անգին ակունք կամ աւանդն է՝ եռակարգ քանդակն (trittique), յորինուած ձիագետոյ աստամբերով, որ շատ աւելի հազուագիւտ և աւելի պինդ է քան գլխոսկր, և է գործ Բեռնարդոս Ուրբիաքի փլորեն տացի ճարտարին: Ճարտարապետական համադրութիւնն զոթական ոճոյն կը վերաբերի, այլ այն վսեմ և զուարթ զօթականի, զոր ցոյց կու տան Սուրբն Մարիամ Եղեղի եկեղեցին, Գիտտոյի զանգակատունն, Աղօթատեղի Ս. Միքայելի ըսուած եկեղեցւոյ խորանն, որք ամէնքն այլ փլորենաւոր պարծանք են: Այս քանդակի զանազան բաժիններու մէջ փորագրուած են Հին և Նոր կտակարանաց այլեւայլ զէպքեր: Սա շատ հաւանական է որ այս տաճարի նախկին հին աւազ խորա-



Շիրիմ Յովհան Գալեազզոյ վիսկոնտեայ.

նին ճակատի պատկերին տեղը գրաւէր, և երբ մեր այժմ հոն տեսածն շինուեր է՝ սա աստ փոխադրուած լինի։ Ասոր ի յիշատակ կրօնաւորք այլ այս քանդակիս իրեւ իւարիսին՝ խորանաց սեղանոյ նման յօրինուած մի շինեալ էին ու զայս ի վրայն յեղուցեր, որ լէպէտ գեղեցիկ երեւոյթ չունէր, բայց առ այս կ'օգտուէր, զի քանդակն առանձնացած կու մնար և կ'արգելուր որ այցելուք կարենան շօշափել այդ թանկագին աշխատութիւնը, որով եղծանել կամ նոյն իսկ փոքրիկ արձանիկս գողանալ։ Սակայն յետոյ խարսխին շուրջն այլ շարք մի խորաքանդակներ բարձրացուցին, որք լծէւ լայնուշ և յարգոյ էին, բայց յաճախ՝ առաջնոյն տեսքով յափշտակուած այցելուաց աչքին կր վրիպէին։ Այդ խորաքանդակքը պիտի տեսնեմք երբ այցելեմք՝ ոսկաւ ժամանակէ ի վեր եկեղեցւոյս մօտ հաստատուած փոքրիկ թանգարանն։

Կ'ըսուի թէ մեծին Նապոլէոնի այս եկեղեցւոյ հրաշակերտքը կողոպտելու համար որոշած հմուտք, կ'ուզէին այդ սքանչելի քանդակն այլ առնուլ և Պարիս յուղարկել, բայց վախճեր են՝ որ քուցէ քակելու ժամանակ ի սպառ կ'աւրեն ու կ'եղծանեն, և այսու յետ կեցեր են այն կողոպտուէն։

(Այցելուք սկսաք զննել մտադրութեամբ իւրաքանչիւր պատմական շարադրածն ու փորագրածը, սքանչանալով կերպարանաց և զարդերու նրբութեան, և այն տիրող պարզութեան վրայ, որով այն խումբ խումբ արձանիկք լիովին կը բացատրէին իւրեանց ամփոփած սքրքալան իմաստը։ Հուկ մտադր զիմացի խմբարանի մէջ, այն տեղ՝ ուր սա կու զայ աւագ խմբարանը կը կարէ և ի վերն գմբէթ բարձրացած է։ Մեր փափակն էր անմիջապէս ի Սուրբ Սրբոցն, զան և աւագ խումբանն այցելել, յուսալով նոր նոր հրաշակերտաց հանդիպել։ սակայն ճարտարապետն մեր ուշադրութիւնը յետ դարձուց՝ դիտել տալով թէ որպիսի՝ արուեստական ճաշակով գործուած էր այն անցքն, որով կառուցողք՝ այն երկու խումբարանաց զիրար կտրելով ձեւացուցած քառակուսւոյն ձեւէն՝ անցեր էին գմբէթին բազմանկիւնի ձեւայն։ Դարձեալ ցոյց տուաւ այն վեմը և գեղեցիկ նկարասրանն որ գմբէ-

թին խարխիւր կը ձեւացընէ, և թէ ինչպէս հօս յայանի կը տեսնուին շինութեան ոճոյն մեղմով կրած այլալոյթիւնքը, այնչափ մեղմով, որ գրեթէ առանց իմացուելու՝ բոլորապէս ոճն յաղթական ի ներքս մտնէր։ Պատմեց ցաւելով, թէ առաջ այս քառակուսւոյն մէջ կայր վանաց աշխատաւոր հոգարաց միաբան կողմերու պատկերազրութիւն մի, խիստ յարգելի փորագրածով և կարկատուն աշխատութիւն, որ հալածանքի և յափշտակութեան ժամանակ՝ եղծուած և յատակ մի յօրինելու գործածուած էր։ Այսա ճարտարապետն դասնալով դէպ ի եկեղեցւոյ կեդրոնը քահանայից զանէն բաժնող դասընտիր ճակատն, ըսաւ)։

— Ասոր վրայ դիտելու շատ բան կայ, որովհետեւ այնպիսի ժամանակ մի շինուած է, յորում քան զճարտարապետական գիծը և աշխատութեան ընտրութիւնը, զխաւոր արժանիքն ազնիւ մարմարին գործածելն էր։ Բայց դիտեցէք խմբարանիս վերեւ տեսնուած գեղեցիկ եռակն պատուհաները, յորոց մին ի միւսոյ կը տարբերի գոթականի վերջին շրջանի ոճով, եթէ ճշմարիտ գոթական ոճն երբեք չլուրարկոյ մէջ գործածուած է։

— Ինչ, հարցուց տիկինն, գոթական ոճն չլուրարկոյ մէջ գործածուած չէ։ Ուրեմն Միւլանու մայր եկեղեցին գոթական չէք համարի։

— Ոչ, տիկին։ զի ըստ իս հօն գոթականի էական բնադրոյմն կը պակսի, այսինքն՝ աւագ սեանց (pilou) անկիւնը միշտ կտրուած են, և ոչ երբեք ծալուած կամ ի վրայն պարձուած։

— Յիրաւի շատ գոհ եմ ճարտարապետ մի գտնելուս՝ որ իմ կարծիքս ունենայ։ Ես պատճառն չեմ՝ դիտել ըսել, բայց իւր ամբողջութեան մէջ այդ եկեղեցին այնչափ տարբեր կը զարնմ, օրինակի համար ըսեմ՝ բուն գոթական աիպ ունեցող վեմայի Ս. Ստեփանոսն, Ռատիբուրայի մայր եկեղեցին, Նորմանդի կրկին եկեղեցիներէ, որ կարող չեմ հասկանալ թէ ինչպէս և ինչու՝ Միւլանու մայր եկեղեցին գոթական կը համարին, և որ աւելին է՝ բուն իսկ գերմանական գոթացի։ Չեզ մեծապէս շնորհապարտ պիտի լինիմ, պարոն, եթէ ձեզ յարմար օր մի և ձեր ամենայն հաճութեամբ հաճէիք ընկերել

մեզ Միլանու այդ եկեղեցւոյն յայց ելնելու :
— Ամենայն յօժարութեամբ, տիկին, և
զայդ ինձ պատիւ կը համարիմ, մանաւանդ
որ ձեզ հետ ընկերելով շատ բան կը սով-
բեցուի :

— Ուրեմն ձեր խօսքն սրուած է, և ես
նախապէս շնորհակալութիւնս կը յայտնեմ :

— Մտնեմք քահանայից զասը տեսնելու :
Բազմոցքն (stalle) Բարդղղովոս Պապա-
ցւոյն ընտիր աշխատութիւններն են, յօրինած
իբր ի 1486 ամին, Ամբրոսիոս Փոսասնոյի,
պսիւնքն՝ մեզ ծանօթ Բորգոնիոնէի գծագրու-
թեանց համեմատ, որոյ նկարուց վրայ զար-
մացանք յառաջ. ասոնց գեղեցկութիւնն և ա-
րուեստորէն գործուածն՝ տրդէն ինքն իրմէ
յայտնի է :

Պատերու վրայի կիսանդրի որմանկարքն
Բորգոնիոնէի են, մեծ մեծ նկարքն՝ Դանիէլ
Կրէսպեայ, իսկ շրջագարքը՝ Վալլետտայի :
Դանս (choeur) սրբարանէն (sanctuaire)
բաժնող պատշգամբ, որ թէւեւ սակաւ ինչ քը-
մահանոյ է քան թէ արուեստական՝ բայց
միայն գեղեցիկ, գործ է Կարոլոս Սիմոնետ-
տայի, զոր Ամբրոսիոս Պրաստոյ միլանեցոն
միտապղընձով զարդարած է. իսկ այդ պինդ
քարի շերտիք կարկառուն աշխատութիւնն,
ինչպէս միւս ամէնքն, Սալքեանց համբերա-
տար աշխատութիւնն է : Հօս ձեզ միայն ի-
րերը պիտի թուեմ, զի այնչափ գեղեցիկ են՝
որ ալլ գովեստի կամ բացատրութեան խօսք
անօգուտ կը մնան : Չորս աշտանակքս և այս
կրկին բրգաձեւք՝ կաղապարած է Աննիբալ
Փոնտանան, և փրանկիսկոս Բրամբիլլա ձու-
լած միտապղընձէ :

Աւագ խորանն սքանչելի է իւր կօնայ զոգ-
նոցով զոր կոփած է Կարազոսսա, և որ համ-
արձակ կրնայ համեմատուիլ Դոնասալլոյի լա-
ւագոյն աշխատութեանց հետ : Խնդրեմ՝ զի-
տեցէք՝ պարսաւոր հրեշտակաց բռնած և սկըհ-
ւոյ իբր յեմարան ծառայող մէջտեղի բոլո-
րակը, միջի մեռեալ Բրիստոսի պատկերա-
քանդակը և զգաժուած սրբուհիքը :

— Ո՛րչափ ցաւ, ո՛րչափ բարեպաշտու-
թիւն կը փայլի այդ փոքրիկ ձեւերու մէջ,
ը սաւ տիկինն. յիբաւի՛ սքանչելի գոգնոց է :

— Խորանի տապանակն կ'ընծայէ մեր

աչաց՝ մի փոքրիկ զմբէթաւոր տաճար, զար-
գարուած միտապղընձեայ փոքրիկ ու վայելուչ
արձաններով : Ամենայն ինչ հօս է. քահա-
նայական աթոռին մօտ կան՝ Յուսայ, Սիբոյ,
Հաւատոյ և Կրօնից արձանք. իսկ խորանին
յետոյ՝ կօնայ քառակուսի շրջանակաց մէջ՝
ալլ գեղեցիկ անդրիք. նոյնպէս ամենագեղեցիկ
են սա միտապղընձեայ ճրագարանքս և խաչն :
Պատուհանն ապակեղ վրայ նկար մ'ունի յօ-
րինուած Բորգոնիոնէին ընտիր ոճով, և է
գերազդէն գործ : Դարձեալ հօս՝ աւետարանի
կոզմէս՝ դիտեցէք Մտեփանոս Սեստացւոյ
փառաւոր աշխատութիւն մի. յորում վերեւ
տեսնուի Գրիստոսի Համբարձումն, շրջապա-
սուած հրեշտակօք, անտի ի վայր՝ Ս. Կոյնն
Եփեսոս մանկամբ, և Ընթրիք Առաքելոց, մա-
սամբ առնուած Լէոնարդոյ Դաւինչիեայ հրու-
շակաւոր որմանկարէն, որ ի սեզանատան ի
Ս. Մարիամ Շնորհաց ի Միլան. ասոնց
ամբողջութիւնն ճարտարապետական համա-
կրթութեան կամ յօրինուած ի մի մէջ ամփոփուած
է՝ վերածնութեան ոճով և հրաշալի հեռա-
ցուցով :

Ինչպէս յայս՝ նոյնպէս յայն կողմն հա-
մանման յօրինուածք կան. պսիւնքն, ի վեր՝
Վերափոխումն Կուսին հրեշտակօք պարստեալ,
ի վայր՝ շիրիմ Ս. Կուսին Մարիամու, դէպ
ի մէջտեղն՝ հաստատութիւն խորհրդոյ Հաղոր-
դութեան, ասորեւ՝ Կանայ հարսանիք և քա-
րօզութիւնն Քրիստոսի ի տաճարին. ասոնք
այլ զարմանալի գործ Բիագինոյա Վայրանոյի :
(Բոլոր այցեւաւքս մին քան զմիւս աւելի յոգ-
նած, միացուիք մունջ, յափշտակուած և ըն-
կըղմնուած խոր հետազօտութեան մի մէջ : Եայտ-
նապէս մեր միտքն յօգնած էր, և ալլ եւս
յառաջել անկարելի, զի ամենեւին համ պիտի
չառնուինք միւս արուեստական գանձերու տե-
սութենէ. և նոյն իսկ ճարտարապետն, որ
վարժած էր գեղեցիկ հրաշակերտքը տեսնելու և
որ մանաւանդ այդ Կարստուսեան տաճարին մեծ
մասը գծագրութեամբ ընթօրինակած էր, ինքն
այլ յոգնած կ'երեւէր, ուստի ամէնքս այլ
նստեցանք դասի բազմոցանով մէջ : — Ապա
յետ երկար հանգստեան՝ դարձեալ մեր շըր-
ջանը սկսանք. և մօտ գալով այն դրան որ դէպի
կրօնաւորաց լուացարանն (lavabo) կը տանէր,

դարձաւ ճարտարապետն և ցուցնելով ըսաւ) .

— Այս դռան, ինչպէս կը տեսնէք, հին աւանդատան դրան հանդիպակ է, ուր նախ այցելեցիք, անոր բոլորովին նման ճարտարապետական գծով, և զործ նոյն Ումոզէյի, միայն թէ փոխանակ դգսից՝ սա դըսուհեաց դէմքերու բոլորակօք զարդարուած է : Հօս ի ներքս անշուշտ ձեր դրուատեաց արժանի կը լինի այս շնորհալից Էդոսն՝ Յիսուս մանուկն ի ձեռին, որմանկար Բեռնարդինոս Լուիննայ :

— Այս ճարտարիս, եթէ կը յիշես, ըսաւ տիկինն իւր առն, մեծ խաչելութիւն տեսանք էկեղեցւոյ մի մէջ ի Լուգանոյ, նմանապէս ուրիշ գեղեցիկ գործեր ի Միլան՝ Աազ վանքի, Բրերայի պատկերաց դահլճի, և Պոլլի Պէզզոլեայ Թանգարանի մէջ :

— Այս արուեստագէտն Լոմբարդիայէն գուրս գրեթէ ծանուցուած չէ, բայց հօս, ինչպէս ըսի, բազմաթիւ աշխատութիւններ թողած է, և խիստ շատ գիւղերու եկեղեցիք ասոր նկարներն ունէին, յորոց բազումք կորսուեցան, ոմանք վաճառուեցան և անցին անոր քան զԱլպեան լերինս, այլ այնու հանդերձ տակաւին բաւական բան մնացած է առ մեզ : Կ'երեւի որ կենօք չափ անխոնջ աշխատած է. իսկ ինքն ծերացեալ վաճճանք է, առ որ կը վկայէ Բրերայի նկարուց դահլճի մէջ պահուած իւր մի նկարն, յորում ուզած է դինքն այլ ի մէջ մուծանել սպիտակափայլ ճօխ մօրուք ծերունւոյ դիմօք :

Այս մեծ լուացարանս որ ամբողջ աջակողմեան պատը զբաւած է, մեծաւ մասամբ Ալբերտ Կարրաբացւոյն գործ է. և արդէն այն երկու բոլորաքանդակաց վրայ զետեղուած Ս. Կուսի Աւետմանէ դիւրին է հասկանալ թէ Տոկիսեան զարդոցի կը վերաբերին : Մեծ խորագրեալն յորում փորագրուած է Քրիստոսի աշակերտաց ոտներ լուանալն, սակաւ փափկութեամբ, զալարուն ծալերով, ու չորցած ցամքած կերպարանօք, Մանտէզազգա եղբարց աշխատութիւնն է : Աւանդութեամբ կ'ըսուի թէ այդ կիսանդրին որ լուացարանիս կենայ ջրամշարի վրայ երկու զգիւններու միջև կը բարձրանայ, և որ մասամբ սափորին (urne) իբր յենարան կը ծառայէ, լինի այս

Կարողաստանի առաջին ճարտարապետին անդրի, ուստի անշուշտ Բեռնարդոս Վենետացին է :

— Դէմքէն շատ հանճարաւոր մարդ չես կարծեր, ըսաւ տիկինն, որ խիստ խժժոռ է : — Հօս մի կողմն գեղեցիկ աւազան մի կայ զգիւններու վրայ յենած, իսկ ի միւսն՝ ջրհորն, Ումոզէյի առաջին գործերէն մին : Պատուհանի ապակւոյն վրայ յօրինուած նշկարն է Սուրբ Բեռնարդոս, հիմնադիր հըռչակաւոր Հիւրանոցին, զուիս գործօց Քրիստափորի Մոսիսեանց :

(Դիմացի խմբարանին թեւի մէջ մտնելով, իսկոյն մեր նայույթը զբաւեց Յովհան Գալէազզոյ Վիսկոնտեայ՝ Կարաուսաստանի հիմնադրին՝ մեծագործ մահարձանն (monument) : Ասոր արուհանակն (dessin) Գալէազզոյ Պեղեղեցիներու կ'ընծայուի, զոր գծած է անշուշտ 1490ին, բայց այս գործն ի 1562 ամին զլիսաւորեցաւ, և թուի թէ « Յովհաննէս Քրիստափորոս հռոմէացի » լատին գրութիւնն, զոր քովթարին վրայ փորագրուած կը տեսնէք, նոյն իսկ կառուցողին անունն լինի : Հօս ահա դարձեալ Ազոստինոս Բուստեայ գործերու կը հանդիպիմք, որոյ սքանչելի խորաքանդակքը տեսանք յառաջ՝ աւագ դրան յերկու կողմներ : Տեսէք որչափ աշխոյժ է ոգեւորութիւն կայ՝ վերեւ կողմնակի հաստատուած ուղղ քառակուսի կենայ տախտակին ներկայացուցած արշաւող ձիաւորաց վրայ :

Բոլոր այս զանգուածոյ վրայի յաղթանշնք (trophée) Բուստեայ յօրինուածք են, իսկ միւս խորաքանդակք Ումոզէյի և Յովհաննէս Յակովբ Պորտայի են : Վերն որմախորշի մէջ հաստատուած Աստուածածինը Յիսուս մանուկն ի գրկի, Բենեդիկտոս Բրիոսքին աշխատած է, որոյ նաեւ այլ քեղեցիկ գործեր տեսաք եւ կեղեցւոյ մուտքին վրայ արտաբոստ :

Դըսին կենդանագիրն զետեղուած է աճիւնակի սափորի վրայ, ընդ մէջ յաղթութեան և համբաւոյ՝ չափով ինչ միայն զրուատելի արձանաց : Երկար ժամանակէ ի վեր կը կարծուէր, և այցելուաց առաջնորդերն ոմանք դեռ կը կրկնեն՝ թէ դըսին մարմինն սափորի մէջ չէ, որպէս թէ՛ երբ մահաբաժան չի-

նուեր է, կարելի չէ եղած գերեզմանը զանել՝ նշանաց պակասութեան պատճառաւ: Բայց սակաւ ամբը յառաջ սափորը բացուեցաւ և ստուգեցաւ որ մէջն է: Աստի յայտնի կ'իմացուի որ ինքնին կրօնաւորը, որպէս չի ոչ ոք այդ իրենց բարերարին տապանը յափշտակէ, այս բարեպաշտ սրտիկը կամ թէ ըսել՝ կեղծ լուրը՝ տարածեր են:

Բրիտոքեայ Աստուածածնի հանդիպակ խորշին մէջ, որ դէպ ի սրբալայրին պատուհանն դարձած է, Յովհան Գալէազզոյի կենդանագիրը զետեղած են, ուզելով՝ զնա այսչափ բարձրացընելով՝ իրենց երախտագիտութեան մեծութիւնը ցուցնել:

Եթէ յարմար կը դատիք, ըսաւ մեզ ճարտարապետն, տակաւին եկեղեցիէն գուրու չեւած՝ այս կողման մատարանց մէջ գտուած մի քանի մեծայարգ նկարք այլ տեսնեմք, որով անընդհատ բովանդակ եկեղեցին այցելած կը լինիմք:

— Ինչպէս որ լաւ կը համարիք՝ այնպէս ըրէք, պարոն. մեք այժմ բոլորովին ձեզ յանձնուած եմք:

— Սա մատարան, որ Ս. Կոստի Աւետարանն ընծայուած է, խորանի պատկերը՝ Կաթիլոս Պրոկակկինոյ նկարած է, 1616ին, իսկ զոգնողը՝ Բուստուլան քանդակած, ի 1675 ամին: Իսկ ասոր խորանի պատկերն Փրանկիսկոս Բարբիերեայ զործ է, որ ուրիշ առումը Գուէրկինոս Գալկենտոյ ալ կոչուի. ուս և Պրոկակկինոյ՝ երկուքն այլ արժանաւոր անձինք: Գոգնոցն Սակքեանց համբերատար աշխատութիւնն է, զոր կարեմք առանց խզմի զանց ընել: Անցնիմք ի Ս. Սիրոսի նուիրեալ մատուռն. ահա հոս այլ Բորգոնիոնէի նոր նկար մի:

— Միշտ կը տեսնուի որ մեծ արուեստագէտ է, ըսաւ տիկինն. ո՛րչափ մեծ վայելչութիւն կը փայլի այդ եպիսկոպոսին վրայ:

— Եւ սակայն բուն իւր զործոց զլուխն

ու պատկն յաջորդ մատարան մէջ է, և պիտի տեսնէք, տիկին, որ իրաւամբ զինքը նաեւ Երջանիկ Հրեշտակ լոմբարդացի կ'անուանեմք:

Ի՞նչպէս կ'երեւի ձեզ այդ խաչելութիւնն, տեսէք ի՞նչպէս ցրտադին է զունոց համայն պատշաճութիւնն, որ բովանդակ տեսարանը կը տխրեցընէ. որպիսի՞ ցաւ նկարուած այդ սուրբ կանանց վրայ... ես կարծեմ աւելին ընել անկարելի էր:

— Ստոյգ է, ըսաւ տիկինն. և արդէն յայտնի կեցած է՝ որ Բորգոնիոնէ գերազանցօրէն իսկ սրբազան նկարիչ մ'էր. որոյ համար եթէ ոչ հրեշտակը կը նկարէին, որպէս Երջանիկ Հրեշտակի մի համար, ինքն հրեշտակօրէն կը նկարէր:

— Սա Ս. Հուգոնի մատուռն է: Խորանի նկարն 1496 թուականը կը կրէ և է զործ Մակրլինոս Դ'Ալպայի, որ գրեթէ անծանօթ անուն մ'է: Զեզ ի՞նչպէս կ'երեւի, միթէ այս Կարտուսաւտանի համար մեծ բախտ չէ՞ր անծանօթ ճարտարաց զործեր ունենալ. թէ այսպէս չլինէր, արդ բոլոր այս նկարք ի Պարիս էին... յիշաւ շնորհակալ պէտք է լինել վերնախնամ տեսչութեան՝ որ ազգեց հզօր Նապոլէոնի այնպիսի հմտից վստահանալ:

Աւարտելով ողջն զիտական թարգմանածոյն, որում անմասն եղած չեմք, կը մագլթեմք մեր ազգին աշխոյժ պատանեկութեան, թէ ոչ այսպիսի փառաւոր տաճարս կառուցանել, զոնէ ի նախնեաց մեզ հասածքը ամբողջընել, և մահաւանդ ոկանատեսից, ջառալ այլոց եւս տեսցընել, մերթ ընդ մերթ Եւրոպեացոց նման անզուլ ջանքով ու խրանամբով զայնա ուսումնասիրելով, նոցա վրայ այսօրինակ հշգրիտ արուեստագիտական նկարներ հրատարակելով, զոր անշուշտ ամէն ուսումնասիրի, թող թէ ազգայնոց սրտեր, երախտագիտութեամբ կ'ընդունին և կ'ընթերնուն:

(Վերջ).

